

ճանչեմ, եւ իմ քարի պէս սիրտս կարծածեդ անելի ձեզի պէս
թշուառներու համար գութ եւ կարեկցութիւն ունի, եւ թերեւս...
օգնութիւն մը նաեւ իմ կանացի տկար ձեռոքս ընեմ ձեզ, եթէ միայն
խելօք վարուելու խոստմունք մը ընես եւ համբերել գիտնաս:

– Միշտ նոյն երգը կը լսեմ, խելօք վարուիլ եւ համբերութիւն
գիտնալ,– ըսաւ Աշոտ հեզնութեամբ եւ աղբայները կրճտելով եւ ոտք
ելաւ: Իսկ իշխանուհին երկու սուր եւ հրամայական աչք վրան
դարձնելով եւ սաստելով՝

– Նստէ՛, անմիտ երիտասարդ,– ըսաւ խստիւ ձայնով,– ձեր տարիքին
միշտ յատուկ է կրթով շարժիլ եւ ի կորուստ դիմել. եթէ ես քեզմէ
ամենափոքր երկիւղ ունենայի եւ վնասել ուզէին ակնարկութիւն մը
բաւական էր ինձ քեզ կապել տալ եւ մինչեւ Պոլիս ղրկել. բայց իմ
միտքս քեզ եւ այդ թշուառ աղջիկն էլ ազատել է: Խօսք տո՛ւր ինձի
համբերել մինչեւ գարուն, դառնալ քու երկիրդ, եւ ժամանակ տալ, որ
բանակցիմ կաթողիկոսին հետ, եւ գարնան ե՛կ եւ կարուհին քուկդ է:

Աշոտ որ նախ այդ կնոջ հրամայող ձայնին տղու մը պէս
հնազանդեցաւ եւ նստաւ, երբ վերջի յուսադիր խօսքերն լսեց՝ տխուր
երեսին փայլակի զուարթութիւն մը ծագեցաւ, բայց շատ կարճ տևեց
այդ զուարթութիւնը, վասնզի նշանուած օրէն անյաջողութիւն
անյաջողութեան վրայ հասել էր, հիմա ինչ որ մէկը չէր կրցել, կին մը
պիտի կրնա՞ր ընել:

Իսկ Վասկանուշ, որ նորա երեսին ամէն շարժմունքը կը տեսներ
գուշակելով մտածութիւնը՝ անելցուց:

– Այո՛, շատ զօրաւոր ձեռաց անկարելին՝ տկարներու կարելի կընէ
աստուած, միայն դու ինձ խօսք տուր հնազանդելու:

– Շատ բարի, ես խօսք էլ կ'ուտամ, կերոնում նաեւ ինչ սրբութիւն որ
կայ երկրիս եւ երկնքին վրայ՝ քու ամէն հրամաններուդ
հնազանդելու, բայց դու էշ ինձ խօսք կ'ուտա՞ս, որ Չարուհին ձեռացդ
պիտի չի հանես եւ իրեն վտանգ մը պիտի չի հանդիպի: